ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ

ՂԵԿԱՎԱՐ

ք. Երևան «30» 01 2025թ

ՀՐԱՄԱՆ N 62 Ա

ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետի պահանջը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Կադաստրի կոմիտեի Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման փորձագետի ծրագիրը՝ Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի 2024-2026 թվականների հարկման բազաների ձևավորման իրականացման նպատակով, համաձայն հավելվածի:

1/30/2025

X

ՍՈՒՐԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Սուրեն Թովմասյան Signed by: TOVMASYAN SUREN 1201860393

Հավելված 1
Կադաստրի կոմիտեի ղեկավարի
«30» 01 2025 թ.
N 62 -Ա հրամանի

ԾՐԱԳԻՐ
ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Փորձագետ ներգրավելու դեպքը և հիմնավորումները

Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 749-Լ որոշմամբ հաստատված Կադաստրի կոմիտեի կանոնադրությամբ Կադաստրի կոմիտեին է վերապահված անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարումն ու կադաստրի համակարգի գործունեության ապահովման լիազորությունը: Կառավարության *2021 թվականի նոյեմբերի 18-ի «ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ* որոշմամբ և *«Հայաստանի Հանրապետության Հարկային Օրենսգիրքի» 228 հոդված 3-րդ կետի* Կադաստրի կոմիտեին է վերապահված Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի 2024- 2026 թվականների հարկման բազաների ձևավորման իրականացման միջոցառումը: Կառավարության 2021-2026 ծրագրի շրջանակներում նախատեսվում է Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի 2024-2026 թվականների հարկման բազաների ձևավորում, ինչը տեղական ինքնակառավարման մարմիններին հնարավորություն կտա հաշվառելու և իրականացնելու 2024-2026 թվականների անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը:

Վերոնշյալ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտություն է առաջացել **Կադաստրի կոմիտեում կանոնադրական խնդիրներից բխող որոշակի ժամկետով ծրագրի իրականացման** դեպքով ներգրավել փորձագետ:

2. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Սույն ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացնելու համար փորձագետ ներգրավում է **1** /մեկ/ տարի ժամկետով:

3. Ակնկալվող արդյունքը

• վերոհիշյալ ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 2023 թվականի հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված տվյալներով անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի գնահատումներ (վերագնահատումներ) և դրանց վերաբերյալ տեղեկությունները տվյալների փոխանակման փոխգործելիության հարթակի միջոցով՝ ինքնաշխատ եղանակով տրամադրում համայնքային էլեկտրոնային կառավարման միասնական հարթակի (ՀԷԿՄՀ) օպերատորին:

4. Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետը՝

Փորձագետը սույն ծրագրով հանձնարարված աշխատանքների վերաբերյալ վեց ամիսը մեկ անգամ՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 5-ը, անմիջական ղեկավարին է ներկայացնում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

5. Աշխատանքների գնահատման չափանիշները

Փորձագետի աշխատանքների գնահատման համար հիմք է հանդիսանում վերջինիս կողմից ներկայացված հաշվետվությունները: Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

6. Փորձագետին ներկայացվող պահանջները

Սույն ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար փորձագետը պետք է ունենա՝

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն,
- բարձրագույն կրթություն,
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն: